ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանի և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանի՝ Իտալիայի Հանրապետություն (Հռոմ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձիք՝ Արտակ Զեյնալյան և Սուրեն Քրմոյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Իտալիայի Հանրապետություն (Հռոմ), 2018թ. նոյեմբերի 11-14-ը:

Հրավիրող կողմը՝ ԵԱՀԿ գործող նախագահի՝ կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով հատուկ ներկայացուցիչ Պաոլա Սևերինո:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Հակակոռուպցիոն ռազմավարությունների զարգացումը թվային ժամանակաշրջանում. վերջին միտումները ԵԱՀԿ-ի տարածքների լավագույն պրակտիկան» խորագրով գիտաժողովին:

Քննարկված թեմաները՝ Գիտաժողովի ընթացքում քննարկվել են հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման և դրանց իրականացման արդյունավետ մեթոդներին և մեխանիզմներին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԵԱՀԿ գործող նախագահի՝ կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով հատուկ ներկայացուցիչ Պաոլա Սևերինոյի հրավերով ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանը և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը 2018թ. նոյեմբերի 11-14-ը Իտալիայի Հանրապետությունում (Հռոմ) մասնաակցել են «Հակակոռուպցիոն ռազմավարությունների զարգացումը թվային ժամանակաշրջանում. վերջին միտումները ԵԱՀԿ-ի տարածքների լավագույն պրակտիկան» խորագրով գիտաժողովին:

Գիտաժողովը կազմակերպվել էր ԵԱՀԿ–ում իտալական նախագահության հատուկ ներկայացուցչի մանդատի ավարտի կապակցությամբ և հրավիրված են եղել մի շարք երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ ու փորձագետներ:

Վերը նշված գիտաժողովի նպատակն է եղել մասնակից պետությունների կողմից կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում փորձի փոխանակումը, որը կնպաստի ԵԱՀԿ-ի շրջանակներում այս ոլորտում առաջընթաց գրանցելուն:

Գիտաժողովի ընթացքում մասնակից պետությունների ներկայացուցիչներն, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ են կատարել նաև հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման և դրանց իրականացման արդյունավետ մեթոդներին և մեխանիզմներին, ինչն անշուշտ Հայաստանի համար ներկայացնում է մեծ կարևորություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս մշակման փուլում է գտնվում 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունը:

ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանը հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով ս.թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում թավշյա, ոչ բռնի հեղափոխության արդյունքներով ձևավորված կառավարության իրականացրած քայլերը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում: Նախարարի պաշտոնակատարն իր ելույթում շեշտել է, որ Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարը հասել է նոր մակարդակի, դարձել է ավելի նպատակային և արդյունավետ:

Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատարը նշել է, որ հակակոռուպցիոն ոլորտում առաջընթացը հիմնականում պայմանավորված է միջազգային չափորոշիչներին համապատասխան օրենսդրության ընդունմամբ և դրա արդյունավետ կիրառմամբ: Մասնավորապես, նախարարի պաշտոնակատարն անդրադարձել է ապօրինի հարստացման քրեականացմանը, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման ազդարարման համակարգի ստեղծմանը, հայտարարագրման ինստիտուտի բարեփոխմանը, գնումների ոլորտում իրական սեփականատերերի ինստիտուտի ու էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների շարունակական ներդրմանը: Վերջինի առումով Արտակ Զեյնալյանն առանձնացրել է ՀՀ արդարադատության նախարարության ստեղծած www.e-draft.am իրավական ակտերի նախագծի միասնական կայքը, www.e-hotline.am թեժ

գծի կայքը, www.e-request.am էլեկտրոնային հետազոտությունների միասնական պլատֆորմը, www.e-license.am լիցենզիայի միասնական էլեկտրոնային ռեեստրը և այլն:

Նախարարի պաշտոնակատարի խոսքով՝ կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանը կենտրոնացած է ոչ միայն իրավական և ռազմավարական գործողությունների մշակման, այլև ինստիտուցիոնալ և հարկադրանքի միջոցների համակարգերի կիրառման վրա: Այս առումով, Արտակ Զեյնալյանը նշել է, որ նախորդ երեք ամիսների ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների և կոռուպցիոն սխեմաների բացահայտման մակարդակը զգալիորեն աճել է:

Արտակ Զեյնալյանը անդրադարձել է նաև ներկայում մշակվող 2019-2022թթ. Հակակոռուպցիոն նոր ռազմավարությանը և նշել, որ այդ Ռազմավարության կանխարգելիչ մասը վերաբերելու է նորարարական մեթոդներով կոռուպցիայի դեմ պայքարին:

Ամփոփելով իր խոսքը՝ ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանը վերահաստատել է ՀՀ կառավարության պատրաստակամությունն ու անհանդուրժողականությունը կոռուպցիայի դեմ պայքարի հարցում և նշել, որ ԵԱՀԿ-ի հետ համագործակցությունը կօգնի Հայաստանին կոռուպցիայի դեմ պայքարում առաջընթացի գնահատման, թույլ կողմերի բացահայտման և ոլորտում հետագա գործողությունների ծրագրման համար:

Անդրադառնալով Ադրբեջանի պատվիրակության ներկայացուցիչ, Գլխավոր դատախազի տեղակալ Կամրան Ալիևի այն հայտարարությանը, ըստ որի՝ «գրավյալ տարածքներում կան օրենսդրության չարաշահումներ, կոռուպցիոն ռիսկեր և այնտեղ հնարավոր չէ իրականացնել հակակոռուպցիոն միջոցառումներ»՝ ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանը հայտարարել է, որ Կոռուպցիայի դեմ պայքարի նվաճումների մասին խոսելիս՝ Ադրբեջանը պետք է հիշի, որ դեռևս իրավական գնահատականներ տրված չեն «Պանամայի փաստաթղթերում» Ադրբեջանի բարձրագույն ղեկավարության, նրանց ընտանիքի անդամների մասին տեղեկություններին, ինչպես նաև պատշաճ քննված

չեն Ադրբեջանի կողմից ԵՄ կառույցների տարբեր պաշտոնյաներին կաշառելու և ադրբեջանական ընկերությունների կողմից փողերի մեծածավալ լվացման հարցերը:

ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատարը Ադրբեջանի ներկայացուցչին հիշեցրել է նաև, որ հակակոռուպցիոն մասնագիտական համաժողովը քաղաքական, իրականությանը չհամապատասխանող հայտարարություններ անելու հարթակ չէ, իսկ եթե ցանկանում են խոսել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի շուրջ, ապա խոսեն էթնիկ ծագման հիմքով Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների կողմից մարդու հիմնարար իրավունքի՝ կյանքի իրավունքի ոտնահարման մասին:

Իտալիայի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Արտակ Զեյնալյանը հանդիպումներ է ունեցել Իտալիայի արդարադատության նախարար Ալֆոնսո Բոնաֆեդեի, ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Թոմաս Գրեմինգերի, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ջորջ Ծերեթելիի և Իտալիայի հակակոռուպցիոն մարմնի ղեկավար Ռաֆայել Կանտոնեի հետ:

Իտալիայի արդարադատության նախարար Ալֆոնսո Բոնաֆեդեի հետ հանդիպմանը ընթացքում երկու գորընկերները քննարկել են դատավորների կրթության կազմակերպման, փորձի փոխանակման, փողերի լվացման, անդրազգային կոռուպցիայի դեմ պայքարի, ինչպես նաև քրեակատարողական և հարկադիր կատարման ոլորտներում համագործակցության հնարավորություններին, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Իտալիայի արդարադատության նախարարը հանդիպման արդյունքներով իր պատրաստակամությունն է հայտնել Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի և արդարադատության ոլորտներում ծրագրեր իրականացնելու համար հայցել Եվրոպական միության աջակցությունը:

ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Թոմաս Գրեմինգերի հետ հանդիպման շրջանակներում Արտակ Զեյնալյանը վերջինիս ներկայացրել է հայաստանյան ներքաղաքական իրավիճակը, թավշյա, ոչ բռնի հեղափոխության ու Կառավարության վեցամսյա գործունեության արդյունքները: ԵԱՀԿ գլխավոր

քարտուղարն անվերապահ աջակցությունն է հայտնել Հայաստանում իրականացվող բարեփոխումներին, մասնավորապես, հակակոռուպցիոն ոլորտում իրականացվող աշխատանքներին:

ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատարը ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ջորջ Ծերեթելիի հետ քննարկել է դեկտեմբերի 9-ին Հայաստանում կայանալիք արտահերթ խորհրդարանական ընտրությունների դիտարկմանը վերաբերող մի շարք հարցեր:

Հակակոռուպցիոն մարմնի ղեկավար Ռաֆայել Կանտոնեի հետ տեղի ունեցած հանդիպմանը ներկա են եղել նաև Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վիկտորիա Բաղդասարյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը: Հանդիպմանը քննարկվել են հակակոռուպցիոն քաղաքականությանը, կոռուպցիայի կանխարգելմանը, ինչպես նաև հակակոռուպցիոն մարմնի լավագույն մոդելին վերաբերող մի շարք հարցեր: Կողմերն անդրադարձել են նաև Իտալիայի հակակոռուպցիոն քաղաքականության փորձին ծանոթանալու նպատակով հայաստանյան պատվիրակության ճանաչողական այցի կազմակերպման հնարավորություններին, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման հարցերով համագործակցությունը զարգացնելուն ուղղված հարցերին:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը բարձրաստիճան գիտաժողովի ընթացքում նույնպես հանդես է եկել ելույթով՝ մասնակիցներին ներկայացնելով ՀՀ կառավարության առաջնահերթությունները կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում, ինչպես նաև մշակման փուլում գտնվող 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական դրույթները:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

19.11.2018թ.